Զեւ եւս հասեալ զինակրին 'ի Դամասկոս, անկաւ յիշխանութենէ Եպարքոսն Իսմայիլ Փաշա, և ամբարձաւ 'ի տեղի նորա զինակիր Արքայի Մէհէմմէտ Փաշա՝ ըստ սադրելոյ ներքինապետին, և արձակեաց 'ի բանտէ զկալանաւորսն Հայոց. զի փոխանորդ Եպարքոսին նախ յագեցաւ 'ի Ցունաց՝ արար այնպէս, և ապա 'ի Հայոց՝ եթող ըզնոսա։

Իսկ նոր Եպարքոսն առաքեաց հրովարտակաւ զայլ ոք 'ի պաշտօնէից իւրոց զկնի առաջնոյն, և նորա հասեալ 'ի Դամասկոս, դարձոյց զնա յետս, և ինքն գնաց յԵրուսաղէմ. ընդ զինակրին եկեալ էին և երկու անձինք յազգէն Հայոց տանել զհրովարտակն, որ եւ բերեալ էին գիր 'ի Յովհաննու Պատրիարքէ. ընթերցեալ Գրիգորի ըմբռնեցաւ 'ի սուգ մեծ վասն բանտարկելոց, մանաւանդ վասն Սեղրոս Ամիրայի, մտերիմ բարեկամին իւրոյ և բարերարին Աթոռոյ. զի կոչեր զնա մեծ մահտեսի և մեծ Ազա. եւ ծանեաւ նաեւ զնենգութիւնս և զխռովութիւնս Ցունաց, զոր արարեալ էին 'ի թագաւորեալ քաղաքին. եւ գլխաւորք ազգին յորդորէին զնա արիանալ 'ի գործ եւ չինայել 'ի ծախս դրամոց, և նորա տարակուսեալ դիմեաց 'ի վանս Լատինաց, և 'ի յայտ առնել նոցա զխնդիր երից հետեւակ ազգաց, խոստացան նոքա օգնել նմա յամենայնի. զի բովանդակ այլազգիք քաղաքին վկայէին այնմ, եթէ դատն դարձցի յԵրուսաղէմ։ Յետ այնորիկ ետ որոնել 'ի տումարս Սուլթան Սէլիմայ, և գտին անդ արձանագրութիւն ինչ արքայական Թուղրայիւ այսպէս. Անդրիաս Պատրիարք եւ 34 կարգաւորք գրեալ յականէ յանուանէ, բնակեալ 'ի սեփհականութեան Հայոց 'ի վանս Ս. Յակոբայ. եւ թէ՝ ելին ընդ առաջ իմ. ետ վաւերել հին դատաւորին, և սպասէր դալստեան նորոյն, և երեքին ազգքն ետուն գիր վկայութեան 'ի դատարանի. էառ նաեւ հանրագիր յայլազգեաց, օգնեցին առ այս եւ Լատինք. էառ նաեւ գիր 'ի կուսակալէն Դամասկոսի, 'ի խնդրոյ քաղաքապետին Երուսաղէմի, եւ զայլ կարեւոր գրեանս, զորս արարին 2 ծրար. զմին առաքեցին ցամաքաւ, և զմիւսն յանձն արարին արանցն այնոցիկ, որք եկեալ էին ընդ զինակրին. ընկերացաւ սոցա և Յակոբ վար-